

## **Մ Ե Թ Ո Դ Ի Կ Ա**

### **Այլ սպառողների (ենթասպառողների) կամ մաքակարարի այլ ցանցերի սնման համար սպառողի մաքուցած ծառայության վճարների չափի հաշվարկման**

Սույն մեթոդիկան սահմանում է էլեկտրամաքակարարող ընկերության (այսուհետև՝ մաքակարար) կողմից սպառողի էլեկտրակայանքներով այլ սպառողներին (ենթասպառողներ կամ մաքակարարի այլ ցանցեր) սնելու համար սպառողի մաքուցած ծառայության վճարների ամսական չափի (այսուհետև՝ ծառայության վճարի չափ) հաշվարկման կարգը:

### **1. ԸՆԴՏԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1 Մաքակարարի կողմից հաբուցման ենթակա են սպառողի կապարած այն լրացուցիչ ծախսերը, որոնք առաջանում են այլ սպառողների էլեկտրամաքակարարումն ապահովելու նպատակով փյալ սպառողի սեփականությունը հանդիսացող կամ փնօրինության փակ գտնվող էլեկտրակայանքների շահագործման ընթացքում:

Եթե փյալ ամսում այլ սպառողների էլեկտրաէներգիայի ծախսը հավասար է գրոյի, ապա մաքակարարի կողմից սպառողին փոխհատուցում չի փրվում և 2.1 կետի համաձայն հաշվարկվող C գումարն ընդունվում է հավասար գրոյի:

1.2 Սույն մեթոդիկայի համաձայն հաշվարկված ծառայության վճարի չափին անհամաձայնությունը չի կարող հիմք հանդիսանալ այլ սպառողների էլեկտրամաքակարարման դադարեցման համար:

### **2. ՍՊԱՌՈՂԻ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԻ ՆԱԾՎԱՐԿՈՒՄԸ**

2.1 Այլ սպառողներին սնելու համար սպառողի մաքուցած ծառայության վճարի չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$C = A + K \quad (1)$$

որտեղ՝

**C** ծառայության վճարի չափն է (դրամ/ամիս՝ առանց ԱԱՏ-ի),

**A** այլ սպառողների էլեկտրամաքակարարման նպատակով սպառողի էլեկտրակայանքների սպասարկման համար անհրաժեշտ լրացուցիչ ծախսերի մեծությունն է (դրամ/ամիս),

**K** այլ սպառողների էլեկտրամաքակարարման հերկանքով սպառողի փրանսֆորմատորում և գծերում առաջացող կորուստների դիմաց փոխհատուցվող ամսական գումարն է (դրամ/ամիս):

2.2 Այլ սպառողների էլեկտրամատակարարման նպատակով սպառողի էլեկտրակայանքների սպասարկման համար առաջացող լրացուցիչ ծախսերի մեծությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A = \alpha_1 \times (n_1 + n_2 / 2) + \alpha_2 \times (n_3 + n_4 / 2) + W_{\text{էԳՔ}} \times (\alpha_3 + \alpha_4 + \alpha_5 + \alpha_6 + \alpha_7) \quad (2)$$

որտեղ՝

- $\alpha_1$  1 բջջի օգտագործման համար, դրա շահագործման նպատակով, սպառողին փոխհատուցվող ծառայության վճարի չափն է (4800 դրամ/ամիս՝ առանց ԱԱՏ-ի),
- $n_1$  110, 35, 6(10) կՎ լարման ենթակայաններում միայն այլ սպառողների էլեկտրամատակարարման ապահովման նպատակով օգտագործվող բջիջների գումարային քանակն է,
- $n_2$  110, 35, 6(10) կՎ լարման ենթակայաններում սպառողի և այլ սպառողների էլեկտրամատակարարման ապահովման նպատակով համապեղ օգտագործվող բջիջների ընդհանուր քանակն է,
- $\alpha_2$  1 միացման կետի օգտագործման համար, դրա շահագործման նպատակով, սպառողին փոխհատուցվող ծառայության վճարի ամսական չափն է (260 դրամ/ամիս՝ առանց ԱԱՏ-ի),
- $n_3$  0,4 (0,23) կՎ լարման միացման կետերում միայն այլ սպառողների էլեկտրամատակարարման ապահովման նպատակով օգտագործվող միացման կետերի քանակն է,
- $n_4$  0,4 (0,23) կՎ լարման միացման կետերում սպառողի և այլ սպառողների էլեկտրամատակարարման ապահովման նպատակով համապեղ օգտագործվող միացման կետերի քանակն է,
- $W_{\text{էԳՔ}}$  սպառողի կողմից այլ սպառողներին հաղորդված ամսական էլեկտրաէներգիայի քանակն է (կՎտժ), որը հաշվառվում է այլ սպառողների առևտրային հաշվառքի սարքերով,
- $\alpha_3$  110 կՎ լարման ենթակայաններում, սպառողի փոխակերպիչների շահագործման նպատակով, 1 կՎտժ էլեկտրաէներգիայի փոխակերպման ծառայության վճարի չափն է (0,482 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՏ-ի),
- $\alpha_4$  35 կՎ լարման ենթակայաններում, սպառողի փոխակերպիչների շահագործման նպատակով, 1 կՎտժ էլեկտրաէներգիայի փոխակերպման ծառայության վճարի չափն է (0,863 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՏ-ի),
- $\alpha_5$  6(10) կՎ լարման ենթակայաններում, սպառողի փոխակերպիչների շահագործման նպատակով, 1 կՎտժ էլեկտրաէներգիայի փոխակերպման ծառայության վճարի չափն է (0,97 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՏ-ի),
- $\alpha_6$  սպառողի 6(10) կՎ լարման էլեկտրահաղորդման գծերի շահագործման նպատակով 1 կՎտժ էլեկտրաէներգիայի տեղափոխման ծառայության վճարի չափն է (0,465 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՏ-ի),

$\alpha_7$  սպառողի 35 կՎ և 110 կՎ լարման էլեկտրահաղորդման գծերի շահագործման նպատակով 1 կՎրժ էլեկտրաէներգիայի փողափոխման ծառայության վճարի չափն է (0,825 դրամ/կՎրժ առանց ԱԱՏ-ի):

2.3 Եթե այլ սպառողների էլեկտրամատակարարման նպատակով սպառողն օգտագործում է մեկից ավելի ենթակայաններ կամ էլեկտրահաղորդման գծեր, ապա սույն կարգի 2.2 կետում բերված A մեծությունը հաշվարկվում է դրանցից յուրաքանչյուրի համար առանձին: Ընդ որում, A մեծությունը չի կարող գերազանցել աղյուսակ 1-ում բերված սահմանային արժեքները յուրաքանչյուր ենթակայանի կամ էլեկտրահաղորդման գծի համար:

աղյուսակ 1

Սպառողի սնման լարումը	Սպառողի ենթակայանի փոխհատուցվող շահագործման ծախսերի սահմանային մեծություն	Սպառողի էլեկտրահաղորդման գծերի փոխհատուցվող շահագործման ծախսերի սահմանային մեծություն
	(դրամ/ամիս, առանց ԱԱՏ-ի)	(դրամ/ամիս, առանց ԱԱՏ-ի)
6(10) կՎ	54 000	10 000
35 կՎ	216 000	17 000
110 կՎ	432 000	18 000

2.4 Այլ սպառողների էլեկտրամատակարարման հետևանքով սպառողի փրանսֆորմատորներում և էլեկտրահաղորդման գծերում առաջացող կորուստները փոխհատուցող գումարը (K) հաշվի է առնվում բանաձևում, եթե դրանք ներառվում են սպառողի կողմից վճարման ենթակա էլեկտրաէներգիայի քանակության մեջ: Այն որոշվում է հետևյալ բանաձևով.

$$K = W_{\text{ենթ}} \times T \times (\alpha_8 + \alpha_9) / (100 - \alpha_8 - \alpha_9) \quad (3)$$

որպես՝

- T սպառողի համար էլեկտրաէներգիայի սակագինն է (ցերեկային, դրամ/կՎրժ առանց ԱԱՏ-ի),
- $\alpha_8$  կորուստներն են փրանսֆորմատորներում (%), որոնք ընդունվում են հավասար 1,3-ի, եթե սպառողը հանդիսանում է 6(10) կՎ ուղիղ բջջով սնվող, կամ սնվում է 35 կՎ և բարձր լարումով,
- $\alpha_9$  կորուստներն են գծերում (%), որոնք ընդունվում են հավասար 2-ի՝ անկախ սպառողի սնման լարման մակարդակից:

2.5 ՏՏ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կարգավորման ոլորտում գրնվող և հանձնաժողովի կողմից հաշվարկված սակագներով գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց փոխհատուցվում է միայն այլ սպառողների էլեկտրամատակարարման

կարարման հեղուկներով նրանց փրանսֆորմացիաներում և էլեկտրահաղորդման գծերում առաջացող կորուստների գումարը, որը հաշվարկվում է սույն կարգի 2.4 կետի համաձայն: